
**ՓՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ
ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՈՒՄ
ՂԱԶԱՐՅԱՆ Հ. Զ.**

Լեզվում ոչինչ կատարելապես անշարժ չէ: Յուրաքանչյուր բառ, քերականական տարր, ոճ, հնչյուն ու հնչերանգ դանդաղ փոփոխվող փոխդասավորություն է՝ ձևավորված անտեսանելի և անդեմ մի հոսքով, որը լեզվի կյանքն է: Մշտական հոսքի հերակլիտյան այս հայեցակարգը լեզվում վերաբերում է առաջին հերթին իմաստաբանությանը, քանզի լեզվական բոլոր տարրերի մեջ հենց իմաստն է ենթակա ամենաշատ փոփոխությունների, ընդ որում, ժամանակի ընթացքում իմաստային փոփոխության են ենթարկվում ոչ միայն առանձին բառերը, այլ նաև ժողովրդախոսակցական լեզվում առաջ եկած և հետագայում վերացարկված բառակապակցությունները, որոնց վերաիմաստավորման շնորհիվ ստեղծվում են ժողովրդի միտքն ավելի պատկերավոր արտահայտող, նրա խոսքին առավել կենդանություն, հյութեղություն ու հուզաարտահայտչականություն հաղորդող լեզվական միավորները՝ դարձվածքները:

Որն է լեզվի ազատ և կայուն կապակցությունների իմաստային փոխակերպման ամենատարածված ձևերից մեկը դրանց բաղադրիչների վերաիմաստավորումն է: Կախված տվյալ կապակցության փոխակերպման բնույթից՝ վերաիմաստավորումը նույնպես կարող է կատարվել տարբեր ուղիներով: Կապակցության վերաիմաստավորումը կարող է տեղի ունենալ փոխաբերացմամբ, փոխանունացմամբ, չափազանցությամբ, շրջաստությամբ, համեմատությամբ և ոճական այլ հնարներով: Հարկ է նշել, որ ամենատարածված և գործուն ուղին փոխաբերացումն է, ընդ որում, դարձվածքներում կարող են փոխաբերացման ենթարկվել թե՛ բոլոր բաղադրիչները, թե՛ դրանցից մի քանիսը և թե՛ միայն մեկ կամ երկու անդամը:

Փոխաբերական վերաիմաստավորումն անվանման փոխանցումն է մեկ նշանակյալից մյուսին, որը կապված է նրա հետ իրական կամ երևակայական նմանության հիմքի վրա¹: Դրա հիմքում կարող են ընկած լինել ամենատարբեր նմանություններ: Այստեղ կարող է տեղի ունենալ իմաստի լայնացում կամ նեղացում, չափազանցում կամ մեղմում: Փոխաբերությունը կարող է նշանակել ոչ միայն օբյեկտիվ իրականության երևույթներին հատուկ հատկանիշների ամբողջությունը, այլև դրանց՝ մարդկանց կողմից վերագրվող հատկանիշները: Սրա հետևանքով է, որ փոխաբերությունն ավելի պակաս օբյեկտիվ է, քան երևակայությունը բացառող փոխանունությունը:

Դարերի ընթացքում իր խոսքն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով ժողովուրդը հիմնվում է ամենատարբեր հանգամանքների

¹ Ullman St. *Semantics. An Introduction to the Science of Meaning*, Oxford, 1977, p. 141.

² Кунин А. В. *Курс фразеологии современного английского языка*, М., 1986, с. 124.

վրա: Զգայարանների միջոցով ստացվող արտաքին տպավորությունները՝ առարկաների արտաքին ձևի նմանությունը, համը, հոտը, լսողությունը, շոշափելիքը և այլ զգայությունները դարձվածքների առաջացման աղբյուր են հանդիսացել, օրինակ³.

Աչքի սևն ու սպիտակը – միակը, մինուճարը, միակ հույսը՝ Մի տաղ ասա քեզ մատաղ, Մմբատ ջան, բարով մեծանաս, իմ աչքիս սև ու սպիտակը (ՊՀ, 62): Աչքիս սև ու սպիտակը սա է մնացել, ինչո՞ւ ես ուզում սրան էլ կորցնել մեծերի նման (ԹԵ, V, 360):

Համը բերանը մնալ – միշտ ախորժակով հիշել կերած համով բանը կամ մի այլ հաճույք՝ Վճարում են, առնում ուտում, համը բերաններն է մնում (ԻԵ, III, 287):

Գլուխ խոնարհել – 1. գլուխ տալ, ողջունել՝ Տեսավ իր նախկին ուսուցչին, գլխարկը հանեց ու գլուխ խոնարհեց: 2. Մեծարել, գնահատել, ակնածել՝ Այն օրից, ինչ ճանաչում եմ ձեզ, գլուխ եմ խոնարհել ձեր առաջ, մեծարել եմ ձեր հիշատակը (ԴԿ, II, 378, թարգմ.): 3. Հպատակվել, ենթարկվել (ստորանալով)՝ Ուրիշին գլուխ խոնարհելու, կամակատար դառնալու սիրտ չունեմ (ԹՄ, 23): 4. Վախենալ, սարսափել՝ Կյանքում որևէ վտանգի առջև նա երբեք գլուխ չէր խոնարհել:

Хвататься за голову – սարսափել, հուսահատվել՝ Ганя, оставшись один, схватил себя за голову (ДФИ, 106):

На лице написано – երեսին գրված է, պարզ է երեսի արտահայտությունից՝ У тебя всё на лице написано, я отсюда буду читать (ГИО, 71).

Падать / упасть / пасть к ногам – մեկին մի բան խնդրել, աղերսել՝ Елена упала к ногам матери и обняла её колени (ТИС, V, 356).

Разевать рот – 1. (ժողովրդ.) սկսել խոսել, ասել իր կարծիքը՝ Аркадий принуждённо засмеялся, а Базаров отвернулся и уже во всю дорогу не разевал рта (ТИС, V, 464). 2. Չափազանց անուշադիր, ցրված կամ անհեռատես լինել՝ И вдруг разевал широкий рот и хохотал безо всякого шума (ТИС, V, 523).

Пучить глаза – համառորեն նայել մեկին՝ На этот раз князь до того удивился, что и сам замолчал и тоже смотрел на него, выпучив глаза и ни слова не говоря (ДФИ, 286).

³ Հոդվածում տեղ գտած դարձվածքներն ու դրանց բացատրությունները քաղված են հետևյալ բառարաններից՝ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1969-1980, Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, *Англо-русский фразеологический словарь* (составил А. В. Кунин), т. 1-2, М., 1967; *Фразеологический словарь русского языка*, под ред. Молоткова А. И., М., 1978; *Квеселевич Д. И. Русско-английский фразеологический словарь*, М., 1998; *Brewer's Dictionary of Phrase and Fable*. London, 1956, *The Old English Dictionary*, vol. 1-12, Oxford, 1961.

Have (got) an / one's eye on sb / sth – (բառացի՝ մեկի, մի բանի վրա աչք ունենալ) հետևել մեկին կամ մի բանի՝ *I am going, but remember what I've said, I'll still have my eye on ye!* (CAH, 38) – *Ես գնում եմ, բայց հիշի՛ր, թե ինչ ասացի, ես դեռ հետևելու եմ քեզ*: *He himself had had his eye on a house there for the last two years, but they wanted such a price* (GJM, 44) – *Նա ինքն աչք էր ունեցել այդ տան վրա վերջին երկու տարվա ընթացքում, սակայն նրանք այնպիսի գին էին պահանջում*:

Stand sth on its head – (բառացի՝ մի բան գլխիվայր շրջել) մի բան հակառակ դիրքերից բացատրել՝ *The world has so changed that the old maxim “buy in the cheapest, sell in the dearest market” is standing on its head so far as England is concerned* (GJS, 92) – *Աշխարհն այնքան է փոխվել, որ հին առածը «գնիր ամենաեժան և վաճառիր ամենաթանկ շուկայում» գլխիվայր է շրջվել, որքանով որ խոսքը վերաբերում է Անգլիային*:

On one's (bended) knees – (բառացի՝ ծնկի եկած), ստորացած, նսեմացած՝ *He knew that in her heart his aunt was on her knees to him, and he was morosely gratified by the consciousness of it* (TA, 23) – *Նա գիտեր, որ սրտի խորքում մորաքույրը ստորացած էր իր առջև, և ինքը տխուր բավարարվածություն էր զգում դրանից*:

Not to lift a finger to help sb – (բառացի՝ մատն իսկ չբարձրացնել մեկին օգնելու համար) ոչինչ չանել մեկին օգնելու համար՝ *We maun do what we can ourselves for his father wouldnta stir his finger to help him* (CAG, 41) – *Մենք ինքներս պետք է անենք ինչ որ կարող ենք, քանի որ նրա հայրը ոչինչ չի անի նրան օգնելու համար*:

Փոխաբերությամբ բազմաթիվ դարձվածքներ են ձևավորվել նաև ժողովրդի բազմադարյան կյանքի դիտումների և կենսափորձի հիման վրա, ինչպես, օրինակ՝

Գլուխը խառը լինել / խառնված լինել / խառնվել – *զանազան գործերով զբաղված լինել, չկարողանալ կենտրոնանալ, շփոթված լինել՝ Իսկ նրա գլուխը այնպես չէ խառը (ԴՎ, 417): «Հաշի՛վը», կրկնեց հյուրը, իբր թե անփույթ, «հա, մոռացա, գլուխս խոսքով խառնվեց» (ՇՔ, 43):*

Փեշքեշ ձիու ատամներին չնայել – *նվերի հանդեպ բժախնդիր չլինել՝ Փեշքեշ ձիու ատամին չեն նայի, է՛յ, - ձայն տվավ մեկը (ԲԵ, 125):*

Ջրի երեսն ելնել – *1. պարզվել, բացահայտվել՝ Իրականությունը ջրի երեսն ելավ, ու բոլորը նրանից երես դարձրին: 2. Դժվար կացությունից դուրս գալ՝ Այդ հարուստները կրնային ջրին երեսը ելլալ, մինչդեռ իրեն պես աղքատ սպասուկի մը... (ՕԵ, 125):*

Թները փռել – *1. տարածվել, փռվել, ձգվել՝ Գարուն, ամեն տեղ նոր կյանք էս վառել, Իմ սրտում էլ էս թներդ փռել (ՏԲ, 78): 2. (Մեկի կամ մի բանի վրա) մեկին հովանավորել, թիկունք լինել՝ Որք էի, գնալու տեղ չունեի: Թները վրաս փռած մեր չունեի (ՄՎ, 215):*

Пропустить мимо ушей – *ուշադրություն չդարձնել՝ Впрочем, я тогда пропустил это всё мимо ушей (ТИТ, 34).*

Сидеть сложа руки – *ձեռքերը ծալած նստել, ոչինչ չանել՝ Скажу вам только одно: нельзя сидеть сложа руки* (ԿԿ, 89).

Говорить другим языком – *այլ կերպ՝ այլ տեսանկյունից խոսել՝ Сам ты говоришь, что нашла же она возможность говорить с тобой совсем другим языком, чем прежде обращалась и говорила* (ԴՓՄ, 239).

Open one's mouth – *(բառացի՝ բացել բերանը) խիստ զարմանալ՝ James gazed up at him with opening mouth, he had never seen his brother look like this* (GJM, 306) – *Ջեյմսը նայում էր նրան՝ զարմանքից բերանը բաց. նա երբեք եղբորն այդ վիճակում չէր տեսել:*

Batter one's head against a brick / stone wall – *(բառացի՝ գլուխը պատին խփել) գլուխը պատին տալ, փորձել հասնել անհնարինին՝ Cut your losses rather than go under. Don't batter your head against a brick wall* (ՇԱԿ, 333) – *Ավելի շուտ կրճատիր կորուստներդ, քան կործանվիր, գլուխդ պատին մի՛ տուր:*

Save one's neck / skin – *(բառացի՝ փրկել վիզը/կաշին) ինքն իրեն փրկել, ազատել՝ At the same time he was thinking it was right decent of Coperwood to forewarn him this way even though he was saving his own neck by so doing* (DF, 203) – *Միևնույն ժամանակ նա կարծում էր, որ Քոփվուդի կողմից պարկեշտություն էր իրեն այս ձևով նախազգուշացնելը, եթե նույնիսկ նա իր սեփական կաշին էր փրկում այդ ձևով:*

Փոխաբերություններ կազմելու միջոցները խիստ բազմաթիվ ու բազմատեսակ են, ուստի հնարավոր չէ դրանք խմբավորել մեկ անվան տակ: Երբեմն փոխաբերության հիմք ծառայող առարկան կամ երևույթը գոյություն չունի իրականության մեջ: Այդ պարագայում ժողովուրդը նմանեցումներ ու համեմատություններ է կատարում՝ օգտագործելով իր երևակայությունը: Առաջին դեպքում ժողովուրդը հիմնվում է իր զգայական դիտարկումների վրա և կատարում բնախոսական մեկնաբանություններ, երկրորդում՝ նախապես գիտենալով երևույթն ու դրա մեկնաբանությունը՝ լեզվական ընդհանրացում է կատարում և երևույթի ֆիզիոլոգիական նշանակության ըմբռնումից հասնում դրա բարոյական նշանակության ըմբռնմանը⁴: Երևակայության միջոցով կազմված փոխաբերություն դարձվածքները մեծ թիվ են կազմում: Դրանք գեղեցիկ ու տպավորիչ լեզվական միավորներ են, որ չեն խամրում կամ հնանում, ինչպես՝

Ծակ բերան – *զաղտնիքը չպահող, բացբերան, բամբասասեր (մարդ)՝ Վա՛յ, քոռանամ, մեր միալումը նրա նման էլ ո՞վ կա, ծակ բերանը նրա գովքն ա անում* (ՊՀ, 38):

Գլխին (սև) ձյուն բերել – 1. *ձերացնել, պառավեցնել՝ Ընտանիքի կորուստը ձյուն բերեց նրա գլխին:* 2. *Դժբախտացնել, աղետի, թշվառության մեջ գցել՝ Բայց եթե կարողանար գուշակել այն, թե իշխանականից*

⁴ Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Ե., 1969, էջ 67:

ավելի բարձր կոչում ունեցող այս փեսացուն ի նչ ձյուն պիտի բերեր յուր, խեղճ հորս գլխին (ՄԳ, 33): Քեզ մեծցուցի, տասներուօր տարվան ըրի, որ աս սև ձյունը գլուխս բերե՞ս (ՄԿ, 217):

Սատանի աչքը քոռ (խսկց.) – սատանան չիմանա, գործը չիսսփանվի՝ Մեկ զատկին, մեկ ջրօրհներին՝ սատանի ականջը քոռ՝ դորդ ա, զանգակի ու պատարագի ձեն իմանում էր, բայց վա՛յ էն իմանալուն (ՄՎ, 18):

Միրտը մխալ – տանջվել, տառապել՝ Այրված եմ, Վարպե՛տ, այրված եմ, – ասացի, – և այնպես, որ մինչև կյանքիս վերջն էլ մխալու է սիրտս (ԲՄ, 317):

Բերանը քամուն բռնել / դեմ անել – ոչինչ չուտել, քաղցած մնալ՝ Ոչ մինը իրանց երեխայի ապրուստն է, թե որ այն էլ ծախեն, բերանները քամուն պետք է բռնեն (ՊՀ, 193):

Լեզուն կապել – 1. մեկին կտրուկ պատասխան տալով լռեցնել: 2. Լեզուն կապ գցել, խոսելու հնարավորություն չտալ՝ Թող գոնե մի անգամ բացարձակ ասեմ այն, ինչ որ վաղուց պետք է ասեի, բայց ամոթը կապում էր իմ լեզուն (ՇԵ, 27):

Голову продать – հանձնվել, իրեն զոհաբերել՝ Не отдаёт он меня, он чует носом- то своим, что я свою голову дешёво не продам (ՕԱՍ, 92).

Связывать по рукам и (по) ногам – զրկել ազատ գործելու հնարավորությունից՝ Да вы опомнитесь, Пётр Петрович, это вы нас по рукам и по ногам связывали, а не мы вас! (ԴՓՍ, 290). Неужели у меня хватило бы духу связать тебя по рукам и по ногам на всю жизнь? (ԿԱՏ, 55).

Водить за нос – խաբել, մոլորեցնել՝ Точно так, как прежде над ним, как над дураком, хохотала, за нос водила, когда ещё он ей жемчуг возил (ԴՓՄ, 355).

Набрать в рот воды – համառ լռություն պահպանել՝ Молчит, хоть бей, хоть брось, всё молчит, словно себе воды в рот наберёт, – всё молчит (ԴՓԲ, 236).

Foam at the mouth – (բառացի՝ փրփրել բերանի մոտ) մոլեգնել, կատաղել՝ I've never seen him so angry. He foamed at the mouth (MWR, 60) – Ես երբեք նրան այդքան բարկացած չեմ տեսել. նա կատաղած էր՝ փրփրած:

Pay through the nose – (բառացի՝ վճարել քթի միջոցով) չափից շատ վճարել՝ Though it was all tied up, that fellow would milk the settlements somehow, and make his family pay through the nose to keep him out of bankruptcy (GJS, 128) – Չնայած ամեն ինչ ավարտված էր, այդ տղան կշահագործեր գյուղերը և կստիպեր իր ընտանիքին մեծ գին վճարել իրեն սնանկացումից փրկելու համար:

Lay behind one's tongue – (բառացի՝ դնել մեկի լեզվի հետևում) լեզվի տակ լինել, մի բան ուղղակիորեն չասել՝ *I gazed at her. Lyrical words lay behind my tongue* (CAG, 155) – *Ես նայում էի նրան՝ լեզվիս տակ քնարական բառեր:*

Ինչպես արդեն նշել ենք, որոշ դեպքերում փոխաբերաբար գործածված է լինում ոչ թե կապակցությունն ամբողջությամբ, այլ՝ նրա մեկ կամ մի քանի անդամը, ինչպես, օրինակ՝

Ականջը / ականջները սրել – *մեծ ուշադրությամբ, լարված լսել՝ Մի-երկու ոտք առաջ գնաց Սմբատն ու ականջը սրեց* (ՊՀ, 118): *Երբ հասան մի փոքրիկ բացատի, շունը հանկարծ կանգ առավ և ականջները սրեց* (ԶԵ, II, 477):

Միրտը փշրվել – *վշտանալ, հուսահատվել, ընկճվել՝ Ռոսկանը դուրս եկավ փշրված սրտով* (ԽՀ, 116):

Գլուխը ուտել – *1. սպանել, ոչնչացնել, 2. մահվան պատճառ դառնալ՝ «Այդ գլավորը մի օր իմ գլուխը պիտի ուտի, նրա ձեռքից պրծում չկա...», – մտմտում էր նա ինքն իրեն* (ԹՄ, 181):

Ձեռքը մերժել – *չհամաձայնել ամուսնանալ, ամուսնացնել՝ Ավելի լավ, ասացի ես իշխանին, դու կմերժեի՞ր քո դստեր ձեռքը հայոց ապագա թագավորին* (ՄԳ, 39):

Кровь загорелась / разгорелась – *1. մեկն աշխուժանում է, 2. ուժեղ հուզմունք է ապրում՝ Зато у меня бывало, вся кровь загорелась, когда Малевский подойдёт к ней* (ТИТ, 43).

Положить живот – *զոհաբերել իրեն՝ Не тронули тебя ни штыки прусские, ни пули турецкие, не в честном бою положил ты свой живот, а сгинул от белого каторжника* (ПАК, 62).

От глубины сердца – *սրտի խորքից, հոգու խորքից՝ Вацлав высказал эти новые слова из глубины своего простого сердца* (ОНК, 104).

Rub noses together – (բառացի՝ քթերն իրար շփել) բախվել, կռվել՝ *It took the very stars like that, he shouldn't wonder, who rubbed their noses together and flung them apart* (GJM, 357) – *Այդպես պատահում էր հենց աստղերի հետ, ինքը չպետք է զարմանար, որոնք կռվում էին, ապա՝ բաժանվում:*

Get / put / set sb on his / the feet – (բառացի՝ մեկին (իր) ոտքերի վրա կանգնեցնել) մեկին ոտքի կանգնեցնել, փրկել՝ *But his absinthe at midday put him on his feet again* (MWH, 410) – *Սակայն կեսօրվա խմիչքը փրկեց նրան:*

Show one's teeth – (բառացի՝ ատամները ցույց տալ) սպառնալ, ատամները ցույց տալ՝ *But at her scarcely perceptible words Brodie turned showing his teeth at her in his old manner* (САН, 480) – *Սակայն նրա հազիվ ընկալելի բառերը Բրոուդին վերադարձրեց՝ սպառնալով նրան ինչպես միշտ:*

Որոշ դարձվածքներում էլ փոխաբերաբար գործածված են սակավանդամ կապակցություններ, օրինակ՝

Մատի փաթաթան դառնալ – մշտական խոսակցության, բամբասանքի առարկա լինել՝ *Գոմապահի և պահակի զրպարտությունը դարձել են մատի փաթաթան և ամեն քայլափոխին երեսովն են տալիս (ՁՀ, 177):*

Քաղցր աչքով նայել / մտիկ անել / մտիկ տալ – բարյացակամ, ուշադիր լինել՝ *Միայն մեր երկիր քարոքանդ չանես ու քաղցր աչքով մտիկ անես (ԹԵ, IV, 11):* *Հենց այդ տեղն էր, որ բախտն իրան քաղցր աչքով նայեց և Սաքոյին երևեցրեց (ՊՀ, 370):*

Բերանի ծամոն / ծամոց / մաստակ դառնալ (խսկց.) – բոլորի խոսակցության, բամբասանքի առարկան դառնալ՝ *Քիչ մը առաջ լսի պատճառը, պարապ տեղը անոր-անոր բերնին ծամոց կըլլանք կոր (ՕԵ, 196):*

Идти в ногу – գործել, զարգանալ մեկի կամ մի բանի համապատասխան, միասին, միաժամանակ՝ *Высокий Аким шёл в ногу с Феодором (ОНК, 176):*

Приносить повинную голову – ընդունել սեփական մեղքը՝ ապաշխարելով, հնազանդությանը: *Прикажи меня казнить – и на плаху несть мне головушку повинную (ЛМГ, 234):*

Set sb by the ears – (բառացի՝ մեկի ականջների վրա դնել) գժտեցնել, կովեցնել մեկին՝ *Even without announcement the return of presents would set London by the ears and bring on her again an avalanche of bills (GJS, 225) – Նույնիսկ առանց հայտարարելու նվերների վերադարձը Լոնդոնում գժտություններ կառաջացնեն և նրա վրա կբերեն հաշիվների հեղեղ:*

Be off one's head – (բառացի՝ գլխից հեռու լինել): *Ցնորված, խելագար լինել՝ He may be a genius but on the other hand he may be off his head (MWH, 403) – Նա կարող էր հանճար լինել, սակայն, մյուս կողմից, կարող է խելագար լինել:*

Take the upper hand – (բառացի՝ վերին ձեռք վերցնել) գերազանցություն, առավելություն ստանալ՝ *It was the first time in his life that anyone had dared to take the upper hand of him (САН, 164) – Կյանքում առաջին անգամ էր, որ ինչ-որ մեկը համարձակվել էր գերազանցել իրեն:*

Փոխաբերությունները հաճախ ունենում են չափազանցված կամ նվազեցված բնույթ. այս դեպքում այսպիսի դարձվածքային միավորի նախատիպի նշանակյալը քիչ է հավանական, սակայն ոչ անհնարին, ինչպես, օրինակ՝

Արյունը թշերից կաթել – շատ առողջ լինել՝ *Աղջկա թշերից լույս ու արյուն էր կաթում (ԽՀ, 135):*

Մի մատ – շատ փոքր, շատ քիչ՝ *Բաս դու ինձ մի մատ քորփա ես կարծում, էլի (ՊՀ, 326):*

Զվի մեջ մազ փնտրել – խիստ բժախնդիր լինել՝ *Իսկ այս տիպը, հապա տեսեք, Ձվի մեջ էլ մազ է փնտրում (ՄԵ, I, 263):*

Висеть на волоске – մազից կախված լինել, վտանգի մեջ լինել՝ *Тут вся моя жизнь на одном волоске висела, чего серьёзнее?* (ԼՓԲ, 202)։

Split hairs – (բառացի՝ բաժանել մասերի) մտնել ծայրահեղ մանրամասների մեջ՝ *Don't split hairs: Those facts don't matter* – Մանրամասների մեջ մի մտիր. այդ փաստերը նշանակություն չունեն։

Փոխաբերությունները հաճախ ունեն մեղմասական բնույթ։ Այդպիսի վերախմաստավորմամբ ցանկություն է արտահայտվում շղարշելու տհաճ փաստերը, մեղմացնելու անցանկալի, խիստ, կտրուկ արտահայտությունները, ինչպես, օրինակ՝

Մազերին ձյուն դնել – ծերանալ՝ Վերջին տարիներին այնքան էր տանջվել, որ ժամանակից շուտ մազերին ձյուն էր դրել։

Bring sb's grey hairs to the grave – (բառացի՝ մեկի մոխրագույն մազերը բերել գերեզման) մեկին տանջելով, տառապանք պատճառելով՝ մոտեցնել մահը՝ *That guy is a real scoundrel, he brought his mother's grey hairs to the grave* – Այդ տղան իսկական սրիկա է. նա իր մորը գերեզման տարավ։

Որոշ փոխաբերությունների առաջացման համար հիմք են կայուն համեմատությունները։ Մշտապես կրկնվելով՝ դրանք կորցրել են իրենց «պես», «նման» բառերը և վերածվել փոխաբերությունների, օրինակ՝

Ջանք կրակ ընկած – եռանդուն, անհանգիստ՝ Ջանք կրակ ընկած այս կողմ վազեց, այն կողմ վազեց, ճար չեղավ։

Փոխաբերական դարձվածքները ոչ միայն նպաստում են խոսքի պատկերավորությանն ու արտահայտչականությանը՝ այն դարձնելով ավելի տպավորիչ, այլև բացահայտում են մարդկային բնավորության տարբեր գծեր, իրավիճակներ, գործողության տարբեր հանգամանքներ։

Փոխաբերական վերախմաստավորման առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ նկատում ենք, որ նման ոճական հնարով կազմված դարձվածքներ հանդիպում են դիտարկվող երեք լեզուներում (և ոչ միայն դրանցում)։ Եվ սա, կարծում ենք, պատահական չէ, քանզի բոլոր լեզուները կրող ժողովուրդներն էլ կարող են ամենատարբեր առարկաներն ու երևույթները նմանեցնել՝ հիմնվելով իրենց տեսողական դիտարկումների վրա, իսկ փոխաբերության հիմք դարձող երևույթի կամ առարկայի բացակայության պայմաններում մտավոր նմանեցումներ կատարել՝ հիմնվելով իրենց երևակայության վրա։ Այս հանգամանքով է պայմանավորված, որ փոխաբերության ոճական հնարով կազմված շատ դարձվածքներ ունեն իրենց համարժեքները դիտարկվող մեկ կամ երկու լեզուներում, ինչպես, օրինակ՝

գլխին մոխիր ցանել – посыпать голову пеплом

գլուխ խոնարհել – преклонять голову

մազերը / գլուխը բռնել – хвататься за голову

- մատը չշարժել (մի բան անելու) – не шевельнуть пальцем — not to lift a finger to help sb
- փեշքեշ ձիու ատամներին չնայել – дарёному коню в зубы не смотрят – not to look a gift horse in the mouth
- ականջի հետև գգել – пропускать мимо ушей
- բերանը բաց մնալ – раскрыть рот — open one's mouth
- կաշին / մորթը փրկել – спасти шкуру – save one's neck / skin
- ձեռքն ու ոտը կապել – связывать по рукам и (по) ногам – tie sb hand and foot
- փրփուրը բերանին – с пеной у рта – foam at the mouth
- լեզվի տակ լինել – висеть на языке – lie behind one's tongue
- ականջները սրել – наострить уши – strain one's ears
- մազից կախված (լինել) – висеть на волоске – hang by a hair.

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս համարժեքները որոշ դեպքերում պատճենման արդյունք են, սակայն հաճախ գործ ունենք տարբեր ժողովուրդների լեզուներում անկախաբար առաջացած համարժեք դարձվածքների կամ պատահական համընկնումների հետ: Եվ, իսկապես, մի թե տարբեր ժողովուրդներ չէին կարող նկատել, որ մարդիկ հուսահատությունից գլուխը կամ մազերը ձեռքերի մեջ են առնում (գլուխը / մազերը բռնել – хвататься за голову / волосы), կամ մի թե միևնույն զգացողության արդյունքը չեն «լսողությունը լարել» իմաստն ունեցող ականջները սրել – **на-вострить уши** – **strain one's ears** դարձվածքները, կամ արդյոք չէ՞ր կարող կաշին կամ մորթը կյանքի խորհրդանիշ լինել՝ հիմք դառնալով կաշին / մորթը փրկել – **спасти шкуру** – **save one's skin** համարժեք դարձվածքների համար:

Փոխաբերական վերաիմաստավորմամբ ձևավորված համարժեք դարձվածքների գոյությունը այլևայլ լեզուներում վկայում է տարբեր ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների մասին: Մյուս կողմից՝ յուրաքանչյուր լեզվի դարձվածքների ֆոնդի հիմնական մասը հատուկ է միայն տվյալ լեզվին՝ անկախ ոճական հնարից (տվյալ դեպքում՝ փոխաբերությունից), որի հիման վրա այն ստեղծվել է: Այս հանգամանքն էլ, իր հերթին, խոսում է տվյալ լեզուն կրող ժողովրդի լեզվամտածողության յուրահատկությունների մասին: Լեզվամտածողության այս ընդհանրությունների ու ազգային յուրահատկությունների ուսումնասիրությունը կարող է նպաստել տարբեր լեզուների դարձվածաբանական համակարգերում գոյություն ունեցող լեզվաբանական ընդհանրությունների (ունիվերսալիաների) բացահայտմանը:

Համառոտագրություններ

ԱՎ – Խաչատուր Աբովյան, Վերք Հայաստանի, Ե., 1975:

ԲԱ – Գարեգին Բեա, Այրված Վշտեր, Ե., 1967:

ԲԵ – Ակսել Բակունց, Երկեր, Ե., 1986:

- ԴԿ – Ալեքսանդր Դյումա, Կոմս Մոնտե Քրիստո, հ. 2, Ե., 1966:
- ԴՎ – Դերենիկ Դեմիրճյան, Վարդանանք, Ե., 1987:
- ԶԵ – Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, հ. II Ե., 1960:
- ԶՀ – Նաիրի Զարյան, Հացավան, Ե., 1947:
- ԹԱ – Ծերուն Թորգոմյան, Անմար կրակներ, Ե., 1959:
- ԹԵ – Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. IV, V, Ե., 1990-1996:
- ԻԵ – Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. III, Ե., 1974:
- ԽՀ – Սերո Խանգաղյան, Հողը, Ե., 1964:
- ՄԳ – Մուրացան, Գևորգ Մարգարետունի, Ե., 1957:
- ՄԿ – Հակոբ Մնձուրի, Կապույտ Լույս, Ե., 1968:
- ՄՎ – Հրանտ Մաթևոսյան, Վիպակներ, Ե., 1990:
- ՇԵ – Ալեքսանդր Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Ե., 1930:
- ՇՔ – Ալեքսանդր Շիրվանզադե, Քառս, Ե., 1955:
- ՊՀ – Պերճ Պռոշյան, Հացի խնդիր, Ե., 1968:
- ՍԵ – Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. I, Ե., 1972-1973:
- ՏԲ – Վահան Տերյան, Բանաստեղծություններ, Ե., 1940:
- ՕԵ – Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, Ե., 1935:
- ГИО – Александр Гончаров, Обыкновенная история, М., 1968.
- ДФБ – Федор Достоевский, Бедные люди. Повести, Л., 1984.
- ДФИ – Федор Достоевский, Идиот, М., 1981.
- ДФП – Федор Достоевский, Преступление и наказание, М., 1983.
- КАС – Александр Куприн, Сочинения в 2-х томах, т.1, М., 1981.
- ЛМГ – Михаил Лермонтов, Герой нашего времени, Стихи-поэмы., Е., 1984.
- ОАП – Александр Островский, Пьесы, М., 1982.
- ОНК – Николай Островский, Как закалялась сталь, Л., 1977.
- ПАК – Александр Пушкин, Капитанская дочка, Л., 1949.
- ТИС – Иван Тургенев, Собрание сочинений в 12 т-х, т. 5, 7, 8, М., 1977-1978.
- ТИТ – Иван Тургенев, Три встречи, Л., 1979.
- ՉՉ – Антон Чехов, Человек в футляре, М., 1985.
- СAG – Archibald Cronin, The Green Years, GB, 1979.
- САН – Archibald Cronin, Hatter's Castle, М., 1963.
- DF – Theodore Dreiser, The Financier, М., 1964.
- GJC – John Galsworthy, In Chancery, М., 1955.
- GJM – John Galsworthy, The Man of Property, М., 1955.
- GJS – John Galsworthy, The Silver Spoon, М., 1956.
- MWH – William Maugham, Of Human Bondage, London, 1975.
- MWR – William Maugham, Rain and Other Stories, М., 1977.

TA – Mark Twain, The Adventures of Tom Sawyer, “FL Publ. House”, M., 1948.

**МЕТАФОРИЧЕСКОЕ ПЕРЕОСМЫСЛЕНИЕ
ВО ФРАЗЕОЛОГИЗМАХ С КОМПОНЕНТАМИ ЧАСТЕЙ ТЕЛА**

КАЗАРЯН А. З.

Резюме

В любом языке одной из самых распространённых форм смыслового преобразования свободных и устойчивых словосочетаний является переосмысление их компонентов. В зависимости от характера преобразования переосмысление может происходить разными способами – метафоризацией, метонимизацией, сравнением и другими стилистическими приёмами. Одним из самых распространённых и продуктивных приёмов является метафоризация.

Метафорическое переосмысление – это перенос переименования с одного денотата на другой, ассоциируемый с ним на основе реального или воображаемого сходства.

Метафоризация наблюдается во фразеологизмах армянского, русского и английского языков (и не только). Несмотря на то, что большинство метафорических фразеологизмов свойственны тому или иному языку, среди данных единиц существуют и такие, которые имеют свои эквиваленты в других языках. Эти эквиваленты свидетельствуют о сходствах языкового мышления народов – носителей указанных языков, что может способствовать выявлению лингвистических универсалий в области фразеологии разных языков.